

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

« ____ » _____ 2022թ.

N ____ Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 58-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքում 2022 թվականի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին նախատեսված մշակութային միջոցառումների անցկացման նպատակով հայտարարված գնման ընթացակարգը, ընթացակարգի չափաբաժինները, գնման պահանջի դադարման հիմքով, հայտարարել չկայացած՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՐ ԶԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Վարչական շրջան	Միջոցառման անվանումը	Պայմանագրի ծածկագիր/ չափաբաժնի համար
1	Աջափնյակ	ՀՀ Անկախության օրվան/սեպտեմբերի 21/ նվիրված միջոցառում	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/91-2 ծածկագրով պայմանագրի 4-րդ չափաբաժին
2	Ավան	ՀՀ Անկախության օրվան /սեպտեմբերի 21/ նվիրված մշակութային միջոցառում	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/28-2 ծածկագրով պայմանագիր
3	Արաբկիր	«Երևանյան ամառ» «Ուսուցչի օր»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/88-1 ծածկագրով պայմանագիր
4	Դավթաշեն	Անկախության օրվան նվիրված տոնակատարություն	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/21-1 ծածկագրով պայմանագիր
		«Էրեբունի-Երևան 2804-ամյակի տոնակատարություն»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/21-2 ծածկագրով պայմանագիր
5	Էրեբունի	«Ուսուցչի տոն»	ԵՔԷԱՃԾՁԲ-22/46-3 ծածկագրով պայմանագրի
		«Էրեբունի-Երևան»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/109 ծածկագրով պայմանագիր
		«Անկախության տոն»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/46-1 ծածկագրով պայմանագիր
6	Կենտրոն	«Գրադարանավարի օր»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/112-1 ծածկագրով պայմանագրի 2-րդ չափաբաժին
		«Անկախության օր՝ սեպտեմբերի 21, կրթա-մշակութային համագործակցություն Սյունիքի մարզի երկու համայնքների հետ»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/71-1 ծածկագրով պայմանագրի 10-րդ չափաբաժին
		«Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք համաքաղաքային բակային ավանդական փառատոն» սպորտային միջոցառում	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/22-22 ծածկագրով պայմանագրի 4-րդ չափաբաժին
7	Մալաթիա-Սեբաստիա	«Անկախության օր» միջոցառում	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/40-2 ծածկագրով պայմանագրի 6-րդ չափաբաժին
8	Նոր Նորք	«Ուսուցչի տոն»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/102-2 ծածկագրով պայմանագիր

		«Անկախության տոն»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/102-1 ծածկագրով պայմանագիր
9	Նորք- Մարաշ	«Սուրբ Աստվածածնի ծննդյան տոն»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/4-1 ծածկագրով պայմանագրի 18-րդ չափաբաժին
		«Նոր Մարաշի վերածնության օր»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/4-1 ծածկագրով պայմանագրի 20-րդ չափաբաժին
		«Անկախության օր՝ սեպտեմբերի 21»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/4-5 ծածկագրով պայմանագրի 19-րդ չափաբաժին
		«Ուսուցչի օր»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/4-5 ծածկագրով պայմանագրի 21-րդ չափաբաժին
		«Թարգմանչաց տոն»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/4-5 ծածկագրով պայմանագրի 22-րդ չափաբաժին
10	Շենգավիթ	«Անկախության տոն»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/80-3 ծածկագրով պայմանագիր
		«Էրեբունի-Երևան տոնակատարություն»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/80-4 ծածկագրով պայմանագիր
		Ջոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված միջոցառում	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/80-1 ծածկագրով պայմանագիր
11	Քանաքեռ- Զեյթուն	«Անկախության հռչակման օր»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/72-1 ծածկագրով պայմանագրի 3-րդ չափաբաժին
		«Ուսուցչի օր»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/72-1 ծածկագրով պայմանագրի 4-րդ չափաբաժին
		«Երևանի օրվան նվիրված միջոցառում»	ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/72-1 ծածկագրով պայմանագրի 5-րդ չափաբաժին

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՐ ԶԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Հիմք ընդունելով Հայ-ադրբեջանական սահմանին 2022 թվականի սեպտեմբերի 13-ին ծավալված ռազմական գործողությունները և վերջինիս հետևանքով երկրում ստեղծված իրավիճակը՝ Երևան քաղաքում չեղարկվել են մի շարք մշակութային միջոցառումներ՝ այդ թվում Անկախության տոնին, Ուսուցչի օրվան, Էրեբունի-Երևան 2804-ամյակին նվիրված տոնակատարությունները, որոնց ձեռք բերման նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից կնքվել էին ծառայությունների մատուցման գնման պայմանագրեր:

Ելնելով այն հանգամանքից, որ դադարել է գոյություն ունենալ գնման պահանջը, անհրաժեշտություն է առաջացել ամբողջությամբ կամ մասնակի չկայացած համարել գնման ընթացակարգերը:

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համայնքի ավագանու որոշման հիման վրա:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում կնքված գնման պայմանագրերի (համաձայն հավելված 1-ի) գնման պահանջի վերացման անհրաժեշտության վերաբերյալ որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱԶՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

**«ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ
ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը Երևան քաղաքի բյուջեի եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ